ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«29» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 252 - 25

Նախաձեռնող՝ «ՍԱՐԱՐՏ ՍԹՈՒՆ» ՍՊԸ
Լոռու մարզ, Մեծ Պարնի, /S/44

Գործունեությունը՝ ***Սարահարթի փուֆերի հանքավայրի առաջին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանում***
Լոռու մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 252 - 25

«29» հոկտեմբերի 2025թ.

Լոռու մարզի Սարահարթի տուֆերի հանքավայրի առաջին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՍԱՐԱՐՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Սարահարթ բնակավայր

Ներածական մաս. «ՍԱՐԱՐՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվում է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի վարչական տարածքում իրականացնել Սարահարթի տուֆերի հանքավայրի առաջին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սարահարթի տուֆերի հանքավայրի առաջին տեղամասը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի վարչական տարածքում՝ գյուղից 1.0 կմ հարավ-արևմուտք, Սպիտակ քաղաքից 5,2 կմ, իսկ Վանաձոր քաղաքից 35 կմ հեռավորությունների վրա, որոնց հետ կապված է ասֆալտապատ մայրուղիով: Դեպի հանքավայր տանող ճանապարհը գրունտային է՝ 1.0 կմ երկարությամբ, որը կապում է Գյումրի-Վանաձոր ավտոճանապարհի հետ: Մոտակա երկաթգիծը՝ Սպիտակի կայարանը, գտնվում է հանքավայրի հարավ-արևելյան կողմում՝ 5 կմ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասի տարածքը տեղակայված է 1670-1690 մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀ տարածքային կոմիտեի երկրաբանական վարչությանն առընթեր օգտակար հանածոների պաշարների հանձնաժողովի կողմից՝ 1952 թ. մայիսի 13-ի N1 արձանագրությամբ, ըստ կարգերի, 2 տեղամասերով՝ A_2-1 566 328 մ^3 ծավալով այդ թվում 1-ին տեղամաս 1367000 մ^3, 2-րդ տեղամաս 199328 մ^3: Շինաքարի ելքը հանքավայրում կազմում է 47.5 %: «ՍԱՐԱՐՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ին Սարահարթի տուֆերի հանքավայրի 1-ին տեղամասից, հանքարդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով տրամադրվել է 3. 91 հա տարածք, որի սահմաններում օգտակար հանածոյի՝

- հաշվեկշռային պաշարները կազմում են՝ 348530 մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 306600 մ³,
- մակաբացման ապարների քանակը՝ 11200 մ³:

Հանքավայրը Վանաձոր և Գյումրի քաղաքների հետ կապված է ասֆալտապատ մայրուղիով՝ համապատասխանաբար 31 և 50 կմ երկարությամբ: Ավտոմայրուղուց մինչև հանքավայր անցնում է 1 կմ երկարությամբ գրունտային ավտոճանապարհ:

Շրջանի գետային ցանցը ներկայացված է Փամբակ գետով և իր վտակներով:

Հանքվայրի շրջանը բնութագրվում է չափավոր կլիմայով, ձմեռը սկսվում է նոյեմբեր ամսից: Օդի առավելագույն ջերմաստիճանը դիտվում է օգոստոսի առաջին տասնօրյակին և հասնում է +35-37⁰C, իսկ նվազագույնը՝ հունվարի երկրորդ տասնորյակին՝ -20-25⁰C:

Հանքավայրի տարածքում տուֆերը իրենցից ներկայացնում են չորրորդական հասակի հրաբխային ապարները, որոնք աչքի են ընկնում մի շարք արժեքավոր շինարարական հատկություններով՝ թեթև քաշով, հեշտ սղոցվող հատկությամբ, սառցադիմացկունությամբ և այլն:

Տուֆերի որակական հատկությունները փոփոխվում են ինչպես տարբեր մակերեսների այնպես էլ նույն կտրվածքի տարբեր խորությունների վրա:

Հանքավայրի սահմաններում ամենաշատ տարածված ապարները հանդիսանում են երրորդական հասակի /էոցեն/ հրաբխածին առաջացումների համալիրը, որոնք ներկայացված են տուֆերով, տուֆաբրեկչաներով և տուֆոգեն ապարներով: Տուֆերի հզորությունը տարբեր է, այն տատանվում է 1-ից 16 մ-ի սահմաններում: Այս տեղամասի տուֆերը իրենցից ներկայացնում են տիպիկ պիրոկլաստիկ ագլոմերատ մանրաբեկոր կառուցվածքով, տարբեր խտության հրաբխածին ապարներ: Կտրվածքը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով. ամենավերին շերտը հանդիսանում են տուֆերը, որոնք դիտվում են ամբողջ տեղամասում մեկից մինչև 12-13 մ հզորությամբ և հասնում են մինչև կիրճի եզրը: Այս տուֆերը սև գույնի են և կազմված են հրաբխային ապակիներով ցեմենտացված՝ մեծամասամբ տձև ապարներից և միներալներից: Հանքավայրի տուֆերը ունեն բլոկային, առանձին տեղերում սյունաձև տեսք, ճեղքերը այստեղ հիմնականում տարածվում են մեկ ուղղությամբ:

Հանքավայրի տուֆերն ունեն բավականին մեծ մինչև 16 մ հզորություն, որից պիտանի տուֆերի հզորությունը հասնում է 12-13 մ-ի: Օգտակար հանածոն ծածկված է միջինը 0,5 մ հզորությամբ հողաբուսական շերտով:

Համաձայն գնահատման հաշվետվության տեղեկատվության հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Հանքավայրի և հարակից տարածքները առնչություն չունեն բնության հատուկ պահպանվող տարածքների, բնության հուշարձանների հետ: Բուն հայցվող տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել:

Հանքավայրի տեղամասը անտառազուրկ է:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները WGS-84 (ARMREF 02) համակարգով հետևյալն է՝

N/N	Կոորդինատները	
	X	Y
1	4525298.00	8432859.00
2	4525341.00	8432858.00
3	4525465.00	8433036.00
4	4525469.50	8433056.50
5	4525488.90	8433056.50
6	4525509.07	8433114.36

7	4525432.99	8433152.05
8	4525426.91	8433154.45
9	4525397.28	8433196.65
10	4525343.00	8433070.00
11	4525257.00	8433003.00

Նախատեսվող գործունեության տարածքում դեռևս ԽՍՀՄ տարիներին, իրականացվել է հանքարդյունահանման աշխատանքներ, որի արդյունքում ամբողջ հայցվող տարածքի մակերեսից հողի շերտը հեռացվել և օգտագործվել է մերձակայքում գտնվող վարելահողերի բարելավման նպատակով, իսկ մի մասը կուտակվել է տարածքի հարավային կողմում:

Հանքավայրի եզրագծում՝ հայցվող տարածքի հարավային կողմում, նախկին շահագործումից կուտակված մակաբացման փուխր ապարների ծավալը կազմում է 11200 մ³:

Հայցվող տեղամասի 3,8 հա մակերեսը համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 06-097-0131-0079 կադաստրային ծածկագրով հողեր են, իսկ 0,11 հա մակերեսը 06-097-0131-0082 կադաստրային ծածկագրով՝ արոտավայր:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի մշակման համակարգ, մակաբացման ապարների շահագործման սկզբում արտաքին լցակույտի տեսքով, հնարավորությունների դեպքում՝ բացահանքի բացված հատակին տեղափոխումով՝ ներքին տեղադրմամբ:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 325 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 140 մ,
- օգտակար հանածոյի միջին հզորությունը՝ 8.91 մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ 348530 մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 306,6 հազ.մ³,
- մակաբացման ապարների /բուսահողի/ քանակը՝ 11200 մ³, որն արդեն հանվել և կուտակվել է հայցվող տարածքում/
- բացահանքի օտարման մակերեսը՝ 3.91 հա:

Բացահանքի վրայի հողաբուսական շերտը ԽՍՀՄ տարիներին հանվել և տարվել է հարակից վարելահողերի բարեկարգման նպատակով, մնացել է միայն 11200 մ³ քանակով հողաբուսական շերտը, որը կուտակված է բացահանքի հարավային կողմում /1680, 1678 հորիզոնների վրա/:

Համաձայն գնահատման հաշվտվության բացահանքի շահագործման ընթացքում կորուստները կկազմեն՝ 41930 մ³ կամ 12.03%:

Նախատեսվում են իրականացնել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝ բացահանքի հյուսիսային մասով անցնող ավտոճանապարհի 1691.3 կետից գրունտային ավտոճանապարհի կառուցում դեպի բացահանքի 1683.3 մ բարձրության հորիզոն, հողային՝ 480 մ³ ծավալը աշխատանքների իրականացում, 500 մ³ ծավալով պաշարների արդյունահանում (ուղեկցվող հանույթ), արդյունաբերական հրապարակի կառուցում՝ 150 մ³:

Հանքավայրի բացումը նախատեսվում է իրականացնել 1683.3 մ բարձրության նիշից: Նախատեսված է հանքավայրի հյուսիսային մասով անցնող ավտոճանապարհի նրա 1691.3

կետից գրունտային ավտոճանապարի կառուցում դեպի բացահանքի 1683.3 մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունը կլինի 169 մ, ամենամեծ թեքությունը՝ 66.97‰: Ավտոճանապարհների անցումը կիրականացվի բուլդոզերի օգնությամբ:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, համատարած, մեկ կողանի, մշակման համակարգ, որի տարրերն են ՝

- հանքաստիճանի բարձրությունը՝ 2.5 մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 90^0,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20 մ:

Հայցվող տարածքում մակաբացման ապարները բացակայում են:

Ելնելով օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկություններից նրանց արդյունահանման կիրականացվի մեխանիկական եղանակով՝ էքսկավատոր XMG XE 490DK հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Հանույթային աշխատանքները սկսելիս աշխատանքային հրապարակը կբերվի հորիզոնական տեսքի:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին ժամանակավոր, հետագայում ներքին բուլդոզերային լցակույտաառաջացում:

Բացահանքի հարավային մասում արդեն կուտակված 11200 $մ^3$ հողաբուսական շերտը և արդյունահանման թափոնները՝ ջարդաքարերը շահագործման սկզբնական տարիներին տեղադրվելու են արտաքին ժամանակավոր լցակույտերում: N 1 հողաբուսական շերտի լցակույտը տեղադրվելու է բացահանքի հյուսիս արևմտյան մասում, իսկ արդյունահանման թափոնները՝ ջարդաքարերը N 2 լցակույտում՝ բացահանքի արևմտյան մասում: 160965 $մ^3$ արդյունահանման թափոնները՝ ջարդաքարերը N 2 արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխվելու և տեղադրվելու են երկու շարքով՝ ավտոինքնաթափի միջոցով: Լցակույտեր տեղափոխվելու են ընդհանուր 172165 $մ^3$ ծավալով ապարներ, այդ թվում 11200 $մ^3$ մակաբացման ապարներ, 160965 $մ^3$ արդյունահանման արդյունքում առաջացած ջարդաքարեր:

Շահագործման 3-րդ տարվանից սկսած բացահանքի հարավային մասում կուտակված՝ 11200 $մ^3$ հողաբուսական շերտը ավտոինքնաթափով ևս կտեղափոխվի N 1 արտաքին լցակույտ:

Շահագործման 5-րդ տարվանից սկսած, ամբողջ հզորությամբ տուֆերը արդյունահանելուց և բացված հատակ ստեղծվելուց հետո, աստիճանաբար, N 1 և N 2 լցակույտերում տեղադրված ապարները տեղափոխվելու և փռվելու են բացված հատակների վրա: Սկզբում լցվելու է N 2 լցակույտի ապարները, որի վրա N 1 լցակույտի հողաբուսական շերտը՝ 4. 5 մ բարձրությամբ և հարթեցվելու է, կատարվելու է ներքին լցակույտաառաջացում և միաժամանակ խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Մինչ շահագործման ավարտը բացված հանքաստիճանի վրա լցվելու և հարթեցվելու է 162915 $մ^3$ ապարներ: Արտաքին լցակույտ տարված ապարների մնացած 9250 $մ^3$ ծավալը, որից 8330 $մ^3$-ը N 2 լցակույտի և 920 $մ^3$-ը N 1 լցակույտի մնացած ծավալներ են, մինչ շահագործման ավարտը նույնպես տեղափոխվելու և կուտակվելու են բացված 1665.8 մ բարձրության հանքաստիճանի վրա: Շահագործման ավարտից հետո այդ ապարները բուլդոզերով տեղափոխվելու են 1663.3 մ բարձրության վրա և հարթեցվելու են:

N 1 լցակույտի մակերեսներն են՝ 35^0-ի թեքության դեպքում վերին մասում՝ 3207 $մ^2$, ստորին մասում՝ 4945 $մ^2$, միջին բարձրություն է՝ 2.35 մ:

N 2 լցակույտի՝ թեքության 35^0-ի դեպքում զբաղեցրած մակերեսներն են՝ վերին մասում 3725 $մ^2$, ստորին մասում՝ 8780 $մ^2$: Երկու շարքի միջին բարձրությունը 13.0 մ է:

Շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողերի վերականգնում:

Համաձայն գնահատման հաշվետվության հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի տեխնածին ճնշումներ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները կապված կլինեն, լցակույտի ձևավորման, ճանապարհների ավտոտրանսպորտի շարժման հետ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքարդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Աշխատանքների իրականացման ընթացքում ջուրը օգտագործվելու է փոշենստեցման, ինչպես նաև աշխատողների խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով: Հանքարդյունահանման աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կկազմի մոտ 1170 տ/տարի: Տեխնիկական ջուրը անհրաժեշտ կլինի հանքախորշերը, մոտեցնող ճանապարհները, լցակույտերը փոշենստեցման նպատակով ջրելու համար: Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը կբերվի Սպիտակ քաղաքի ջրամատակարարման ցանցից: Աշխատողներին խմելու և կենցաղային նպատակներով միջին օրեկան ջրածախսը կկազմի 0.223 մ^3:

Ստորերկրյա ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն դրսևորվելու, քանի որ գործունեության ենթակա տարածքում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Կենցաղային կեղտաջրերը կկուտակվեն անթափանց բետոնային լցարանում, որտեղից պարբերաբար համապատասխան ծառայության կողմից կտեղափոխվեն:

Հանված հողերի պահպանման նպատակով կիրառվելու է ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 1404-Ն և 2011թ. սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշումների պահանջներով:

Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը կսահմանվի 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի): Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, նախալեռնաթեքվածքային, թույլ ալիքաձև ձորակներով մասնատված ռելևֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած ժայռային մակաբացման ապարները, որոնք իրենցից ներկայացնում են շինաքարի արդյունահանման արդյունքում առաջացած ջարդքարեր՝ 160965 մ^3 ծավալով/ հաշվառվել են 34000110 01 99 5 ծածկագրով, իսկ փխրուն մակաբացման ապարները՝ /արդեն հանված և կուտակված 11200 մ^3 ծավալով/ 34000120 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, և համարվում են ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումները, որոնք թույլ կտան նվազեցնել հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, այդ միջոցառումներից են՝

- լեռնային տեխնիկայի շարժիչների կարգավորում, լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների վրա չեզոքացուցիչների տեղադրում, ինչը կնվազեցնի և կկրճատի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածի, արտադրական հրապարակի, ճանապարհների ջրցանում,
- ներհանքային ճանապարհների բարեկարգում, խճապատում՝ մակաբացման շերտի ապարներով,
- լցակույտի, խախտված տարածքների ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու ծավալները,
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության՝ բնապահպանական միջոցառումների վերանայում,
- արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը թույլ կտա կրճատել փոշեգոյացման ծավալները,
- շահագործման արդյունքում առաջացող կեղտաջրերի հավաքում անթափանց հորի մեջ, ինչի հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության կողմից,
- կենսաբազմազանության պահպանության միջոցառումներ՝ վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրություններ և այլն:

Նախատեսված են նաև հնարավոր անբարենպաստ օդերևութաբանական պայմանների, հակավթարային, արտակարգ իրավիճակների դեպքում կառավարման բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո վերջնական կհարթեցվի բացահանքի հատակի ողջ մակերեսը՝ 36700 մ², N1 և N2 լցակույտերի տարածքները՝ 13800 մ², արտադրական հրապարակը 250 մ² ինչպես նաև մուտքային ավտոճանապար 1272 մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 52022 մ²: Ռեկուլտիվացիայի ընդհանուր արժեքը կազմելու է 2426,9 հազ. ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվի նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1.Մթնոլորտային օդը աղտոտող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ բացահանքի տարածքում, ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ:

2.Լեռնատրանսպորտային սարքավորումների՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական ստուգումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

3.Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

4.Վայրի բնության, կենսամիջավայրի, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 240 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և լսումները կատարվել են Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրում:

Սարահարթ բնակավայրի ղեկավարի նստավայրում, անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, Սպիտակի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումում:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են լեռնային նախապատրաստական աշխատանքների և արդյունահանման հետ՝ համաձայն գնահատման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1.Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Սպիտակ համայնքում (Սարահարթ բնակավայր) ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:

3. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

4. Իրականացնել արտադրական տարածքի կանաչապատում՝ արագ աճող ծառատեսակներով կամ թփերով, ինչը նախատեսված է հաշվետվությամբ:

5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

8. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՍԱՐԱՐՏ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Սարահարթի տուֆերի հանքավայրի առաջին տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Հովակիմ Ֆրունզիկյան